ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի ելույթը ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Արտակ Զաքարյանի՝ ՀՊՏՀ այցի առթիվ

Հարգելի պարոն Զաքարյան

Ուրախ ենք հյուրընկալել Ձեզ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում՝ Հայաստանի Հանրապետության անկախության 26-ամյակին նվիրված միջոցառումների շեմին: Ցանկանում եմ մեր համալսարանի աշխատակազմի և ուսանողության անունից շնորհակալություն հայտնել պաշտպանության հարգարժան նախարարին ու նաև Ձեզ՝ այս բազմազբաղ օրերին ժամանակ գտնելու և մեր համալսարանի նախաձեռնած միջոցառմանն արձագանքելու համար:

Հարգելի պարոն Ավագյան, հյուրեր, ներկաներ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ռազմահայրենասիրական դաստիարակությունը բարձր հիմքերի վրա է՝ այն մեր գործունեության կարևոր ուղղություններից է, որը վերջին տարիներին ավելի է ամրացել ու հարստացել: Զորամասեր այցելությունները, ռազմահայրենասիրական միջոցառումների կազմակերպումը, զինված ուժերի կողմից տարատեսակ միջոցառումներին ներգրավելը վկայում են այն մասին, որ մեր համալսարանականների համար հարազատ է «Ազգ-բանակ» գաղափարախոսությունը: Մեր աշխատակազմը, պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողությունը պատրաստակամորեն է արձագանքում Հայոց բանակին վերաբերող բոլոր խնդիրներին ու նախաձեռնություններին, զգայուն է զինված ուժերում կատարվող իրադարձությունների նկատմամբ: Սրա վառ վկայությունն է Ապրիլյան քառօրյա պատերազմը, որը միասնականացրեց ոչ միայն ամբողջ հայությանը, այլև մեր համալսարանի կոլեկտիվին և ուսանողությանը: Սա

ծանր պահերին բռունցքվելու մեր ժողովրդի կարողության ու նվիրումի վառ օրինակ էր:

Յուրաքանչյուր հայ գիտի, որ այսօր հայոց պետականության, մեր երկրի անկախության և անվտանգության երաշխավորը Հայաստանի զինված ուժերն են, մեր ամուր բանակը, մեր քաջ զինվորը: Հայրենիքի պաշտպանության սրբագույն գործը պետք է լինի յուրաքանչյուր հայի պարտքը, և ես կարծում եմ, որ համալսարանները այս հարցում կարևոր դերակատարում ունեն այն իմաստով, որ պետք է ձևավորեն ու հղկեն պետության համար պիտանի, հայրենասեր քաղաքացիներ: Համոզված եմ՝ այս հանդիպումը, որը կազմակերպել է մեր ուսանողական խորհուրդը Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հետ, ևս մեկ լավ առիթ է մեր ուսանողության և բանակի միջև երկխոսության կայացման ու նաև նման հարցերի շուրջ պարզաբանումներ լսելու համար:

Շնորհակալություն եմ հայտնում ուշադրության համար և հրավիրում անկեղծ երկխոսության:

Հարգանքով՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր